

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/1

13 սեպտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Արա Եղոյան» ՍՊԸ տնօրենի գանգատները ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 10.08.2016թ. թիվ 2133019 ակտի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 01.08.2016թ. թիվ 330203 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 13.05.2016թ. թիվ 2133019 հանձնարարագրի «Արա Եղոյան» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 10.08.2016թ. թիվ 2133019 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 60.000 դրամ:

Միևնույն ժամանակ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 01.08.2016թ. թիվ 330203 որոշմամբ «Արա Եղոյան» ՍՊԸ տնօրեն Արա Եղոյանը վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1821 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 250.000 դրամի չափով:

Գործում առկա ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ «Արա Եղոյան» ՍՊԸ-ի կողմից իրականացված գործունեությանը վերաբերող հանգամանքները ենթակա են լրացուցիչ ուսումնասիրության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

«Արա Եղոյան» ՍՊԸ տնօրենի գանգատների հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ